



ՀՕՄ-ի Մոնթրեալի «ՍՕՍԷ» մասնաճիւղի նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ իր պարսկահայ ընկերուհիներուն եւ բարեկամուհիներուն, Հինգշաբթի, 4 Փետրուար 2016-ի երեկոյեան, յետ Սուրբ եւ Անմահ Պատարագին՝ «Ա. Ահարոնեան» սրահին մէջ կազմակերպեց «Վարդանանց Ճակատամարտ»-ին նուիրուած ընթրիք։ Սոյն ընթրիքին իր բարձր

հովանաւորութիւնը կը բերէր Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Տէր Մեղրիկ Եպիսկոպոս Բարիքեանը։

Ընթրիքի ընթացքին Սուրբ Յակոբ Ազգային Վարժարանի «Սարաֆեան Նախակրթարան»-ի եւ «Բասդրմաճեան Երկրորդական»-ի աշակերտական խումբերը՝ իրենց դաստիարակներուն եւ տնօրէնուհիին առաջնորդութեամբ, հանդէս եկան եւ ճոխացուցին երեկոն ներկայացնելով արտասանութիւններ եւ երգեր։ Իսկ օրուայ պատգամաբերը Տէր Վարդան Վարդապետ Թաճեան իր հայրական խօսքը փոխանցեց հաւատացեալ եւ միշտ ՀՕՄ-ի նախաձեռնութիւնները քաջալերող ներկաներուն։

Աւանդութիւն դարձած այս նախաձեռնութիւնը առիթ մը եղաւ՝ ի մի հաւաքելու մեր ընկերուհիները նաեւ համայնքիս անդամները յիշատակելու համար մեր պատմութեան ամենակարեւոր եւ նշանակալից տօներէն մին։





Այս առթիւ, շնորհակալութիւն կը
յայտնենք բոլոր անոնց, որոնք
իրենց մասնակցութիւնը բերին,
յաջողութեամբ պսակելու համար՝
ՀՕՄ-ի Մոնթրէալի «ՍՕՍԷ»
մասնաճիւղի՝ «Վարդանանց
Ճակատամարտ»-ին նուիրուած
ձեռնարկին:

